ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հայկ Բաբուխանյանի, Ռուզաննա Մուրադյանի, Կարինե Աճեմյանի և Լեոնիկ Ալեքսանյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» և «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (*Պ-795-22.05.2015-ՊԻ-010/0* և *Պ-795[1]-22.05.2015-ՊԻ-010/0*) վերաբերյալ:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

Նախագծի ընդունման անհրաժեշտությունն առկա չէ:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածով

առաջարկվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.1-ին հոդվածի 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. Եթե վիրավորանքը կամ զրպարտությունը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա անձը կարող է օգտվել սույն հոդվածի 7-րդ և 8-րդ կետերով սահմանված պաշտպանության միջոցներից, եթե նա մինչև դատարան դիմելը «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով դիմել է լրատվական գործունեություն իրականացնողին հերքում և (կամ) պատասխան հրապարակելու պահանջով և վերջինս մերժել է հերքման և (կամ) պատասխանի հրապարակման պահանջը կամ խախտել է հերքում և (կամ) պատասխան տարածելու՝ օրենքով սահմանված կարգն ու ժամկետը՝ բացառությամբ մարդու անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը խախտելու, նախկինում նույն լրատվամիջոցի կողմից նույն անձի վերաբերյալ հերքում և (կամ) պատասխան տարածելու, ինչպես նաև սույն օրենսգրքի 17-րդ հոդվածով նախատեսված դեպքերում»:

Ըստ էության, նշված կարգավորմամբ առաջարկվում է ներդնել պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանության վերաբերյալ գործերով վեճերի լուծման պարտադիր արտադատական կարգ: Այդ առումով նախագծով առաջարկվող կարգավորումը խնդրահարույց է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի տեսանկյունից:

Ներկայիս կարգավորման պայմաններում անձի կողմից տվյալ բնույթի գործերով վեճի լուծման արտադատական կարգին դիմելը կրում է հայեցողական բնույթ: Ինչպես նշել է Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը N ԼԴ/0749/02/10 գործով 2012 թվականին կայացրած իր որոշմամբ, ներկայումս իրավունքի պաշտպանության

միջոցի ընտրությունը կատարում է տուժողը: Վերջինս կարող է մի դեպքում նախապատ-վություն տալ անմիջապես զանգվածային լրատվության միջոցին հերքման պահանջ ներկայացնելուն, մյուս դեպքում իրավունքի պաշտպանության հայց ներկայացնելուն: Նախագծով, սակայն, քաղաքացիներին պարտադրվում է՝ հերքման կամ պատասխանի պահանջով դիմելու վիրավորանք կամ զրպարտություն կատարած զանգվածային լրատվության միջոցին:

Նշված հիմքերով գտնում ենք, որ նախագծով առաջարկվող կարգավորումներն ընդունելի չեն:

«Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

Գտնում ենք, որ ներկայացված նախագիծն ընդունելի է այն առումով, որ այն կարգավորում է ցանցային լրատվամիջոցների ելքային տվյալների հետ կապված հարաբերությունները, սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ներկայացված նախագծի որոշ դրույթներ չեն բխում մի շարք օրենքների պահանջներից:

Այսպես, նախագծի 1-ին հոդվածով լրացվող չորրորդ պարբերության 2-րդ կետի համաձայն՝ ցանցային լրատվության միջոցը պետք է մշտապես ներառի՝

1) «լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական անձի լրիվ ան-վանումը»: Սակայն, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, իրավաբանական անձն ունի իր անվանումը, որը ցուցում է պարունակում նրա կազմակերպական-իրավական ձևի մասին: Այսինքն, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքն արդեն իսկ նախատեսում է իրավաբանական անձի անվանման մեջ դրա կազմակերպաիրավական ձևը ներառելու

պահանջ: Ուստի լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական անձի կազմակերպական-իրավական ձևը նշելու անհրաժեշտությունը բացակայում է: Բացի դրանից՝ օրենսգրքի նույն հոդվածի համաձայն իրավաբանական անձն ունի անվանում և ոչ թե՝ լրիվ անվանում: Հետևաբար նախագծից անհրաժեշտ է հանել «լրիվ» բառը.

2) «այլ պահանջների հետ մեկտեղ նաև անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայականի համարը»: Մինչդեռ, «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի համաձայն, ֆիզիկական անձի՝ որպես անհատ ձեռնարկատիրոջ իրավունակությունն ու գործունակությունը ծագում են նրա պետական հաշվառման պահից: Իսկ նույն օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառումը, նրան հաշվառումից հանելն իրականացվում են օրենքով սահմանված կարգով: Ուստի նախագծում անհատ ձեռնարկատերերի առնչությամբ «գրանցման» բառն անհրաժեշտ է փոխարինել «հաշվառման» բառով:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունմանը, իսկ «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն ընդունելի կհամարի իր կողմից ներկայացված առաջարկությունների ընդունման դեպքում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Արսեն Մկրտչյանը:

Օրենքների նախագծերի փաթեթի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվում են օրենքների նախագծերի փաթեթի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունման դեպքում

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

Եզրակացություն

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» և «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» և «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝ նախագծեր) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծերի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագծերը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն **չեզոք ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն **չեզոք ազդեցություն:**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» և «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» և «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերով (այսուհետ՝ Նախագծեր) փոփոխվում են պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը և պայմանները, ինչպես նաև Նախագծերով հստակեցվում են այն պարտադիր պահանջները, որոնք պետք է պարունակի ցանցային լրատվության միջոցը:

Նախագծերով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային խմբի շուկայի հետ, ուստի Նախագծերի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային խմբի շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծերի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» և «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» և «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագիծ)՝ գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծով *հստակեցվում են զանգվածային լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության արդյունքում պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցմանը վերաբերող դրույթները, ինչպես նաև սահմանվում է ելքային տվյալների ցանկ ցանցային լրատվամիջոցների համար՝ նյութական կրիչի վրա թողարկված լրատվության միջոցի համար արդեն իսկ ամրագրված ելքային տվյալների ցանկի օրինակով* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն ***չի նախատեսվում:***

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ օրենքներ) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքների նախագծերի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքների նախագծերը բնապահպանության ոլորտին չեն առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին պահանջներին չեն հակասում:

Օրենքների կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի» և «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծերի վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերն իրենց մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծերի փաթեթով առաջարկվում է՝

1. սահմանել, որ, եթե անձը լրատվամիջոցի կողմից ենթարկվել է զրպարտանքի կամ վիրավորանքի, դատական կարգով կարող է պահանջել հերքում կամ փոխհատուցում, եթե մինչև դատարան դիմելը «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով դիմել է լրատվական գործունեություն իրականացնողին հերքում և (կամ) պատասխան հրապարակելու պահանջով և վերջինս մերժել է հերքման և (կամ) պատասխանի պահանջը կամ խախտել է հերքում և (կամ) պատասխան տարածելու՝ օրենքով սահմանված կարգն ու ժամկետը,

2. սահմանել, թե ինչ տվյալներ պետք է ներառի ցանցային լրատվության միջոցը :

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ օրենքների նախագծերի ընդունումը ՀՀ պետական և համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի վրա կունենա չեզոք ազդեցություն:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-795-22.05.2015-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 10-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.
«10. Եթե վիրավորանքը կամ զրպարտությունը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա անձը կարող է օգտվել սույն հոդվածի 7-րդ եւ 8-րդ կետերով սահմանված պաշտպանության միջոցներից, եթե նա մինչեւ դատարան դիմելը «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով դիմել է լրատվական գործունեություն իրականացնողին հերքում եւ (կամ) պատասխան հրապարակելու պահանջով եւ վերջինս մերժել է հերքման եւ (կամ) պատասխանի հրապարակման պահանջը կամ խախտել է հերքում եւ (կամ) պատասխան տարածելու՝ օրենքով սահմանված կարգն ու ժամկետը՝ բացառությամբ մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը խախտելու, նախկինում նույն լրատվամիջոցի կողմից նույն անձի վերաբերյալ հերքում եւ (կամ) պատասխան տարածելու, ինչպես նաեւ սույն օրենսգրքի 17-րդ հոդվածով նախատեսված դեպքերում»:
Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-795[1]-22.05.2015-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 13-ի ՀՕ-14-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածը լրացնել նոր պարբերությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.
«4. Ցանցային լրատվության միջոցը պետք է մշտապես ներառի՝
1) լրատվության միջոցի անվանումը.
2) լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձեւը, գտնվելու վայրը, լրատվական գոծունեություն իրականացնելու հասցեն, կոնտակտային հեռախոսը, էլեկտրոնային փոստը, իրավաբանական անձի պետական գրանցման (կամ իրավաբանական անձի անունից գործող նրա առանձնացված ստորաբաժանման հաշվառման) վկայականի համարը, տրման օրը, իսկ եթե լրատվական գործունեություն իրականացնողը ֆիզիկական անձ է, ապա նրա անունը, ազգանունը, հասցեն, եթե նա անհատ ձեռնարկատեր է, ապա նաեւ պետական գրանցման վկայականի համարը եւ տրման օրը.
3) լրատվության միջոցի թողարկման համար պատասխանատու անձի անունը, ազգանունը (ըստ անձնագրի).
4) տվյալ թողարկման (լրատվության) տարին, ամիսը եւ ամսաթիվը:»:
Հոդված 2. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում» փոփոխություն կատարելու մասին» եւ «Զանգվածային լրատվության մասին ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ

Սույն նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է դատարաններում գործերի բեռնաթափման անհրաժեշտությամբ եւ վեճերի արտադատարանական կարգով լուծման խրախուսմամբ:

Ուսումնասիրելով Մարդու իրավունքների Եվրոպական Դատարանի պրակտիկան, դյուրին է եզրակացնել, որ շատ դեպքերում, բավարարելով բողոքները, Դատարանը եզրակացնում է, որ դրական որոշումն ինքն իրեն հանդիսանում է բավարար փոխհատուցում պատճառված բարոյական վնասի դիմաց:

Ոչ վաղ անցյալում վիրավորանքն ու զրպարտությունը ներառված էին քրեական օրենսգրքում, այսինքն՝ հանգեցնում էին քրեական պատասխանատվության: Ըստ քրեական օրենքի՝ հանցագործություն է համարվում եւ պատասխանատվություն է ենթադրում միայն հանցավոր այն արարքը, որը կատրավել է դիտավորությամբ: Հետեւաբար, լրատվամիջոցի պատրաստակամությունը հրապարակել հերքում եւ պատասխան վկայելու է այն մասին, որ որպես վիրավորանք կամ զրպարտություն ընկալվող հրապարակումը իրականացվել է ոչ դիտավորությամբ:

Սույն լրացում շեշտակի կբեռնաթափի դատարանները, եւ նկատի ունենալով այն փաստը, որ շատ դեպքերում լրատվամիջոցի դեմ ուղղված պահանջները ոչ միայն ակնհայտ անհիմն են, այլեւ հետապնդում են լրատվամիջոցների գործունեությանը արհեստական խոչնդոտներ ստեղծելու նպատակը, կարելի է եզրակացնել, որ դատական պաշտպանության հիմնականում կդիմեն այն անձինք, ում վիրավորել կամ զրպարտել են դիտավորությամբ:

Առաջարկվող լրացումը մեր կարծիքով կամրապնդի ժովորդավարության հիմքը հանդիսացող ազատ խոսքի ինստիտուտը այնքանով, որքանով խիստ կսահմանափակի շինծու այն հայցերը, որոնց դատավարությունը ուղղակիորեն ֆինանսավորվում է հայրենական ու արտերկյա այն անձանց ու կազմակերպությունների կողմից, որոնց նպատակն է կասեցնել իրական ժողովրդավարությունը՝ փոխարինելով այն ամբոխավարությամբ:

Ինչ վերաբերում է «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու առաջարկությանը, ապա այն բխում է արտադատարանական կարգով անձանց եւ լրատվամիջոցների միջեւ կոնտակտի ձեւավորման դյուրացման անհրաժեշտությունից: Եթե նյութական կրիչի վրա տարածվող ԶԼՄ-ների թողարկման տվյալների մասին պահանջը նշված է «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքում, հեռուստառադիո հաղորդումներով տարածվող ԶԼՄ-ների համար՝ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի հոդված 21-ով (ելքային տվյալներ) եւ հոդված 48-ով (լիցենզավորում), ապա ցանցային լրատվամիջոցների համար ելքային տվյալների ցանկը սահմանված չէ, ինչը երբեմն ստեղծում է դժվարություններ ցանցային լրատվամիջոցին հերքման եւ պատասխանի պահանջը օրենքով սահմանված կարգով եւ ժամկետում ներկայացնելու համար: